



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 օգոստոսի 2021 թվականի N 278-Ա

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի հունիսի 24-ի N 209-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2021 թվականի հուլիսի 23-ի N Ն/898-2021 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական *Տիգրան Գեղամյանին* 2021 թվականի օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում, յոթ օրով գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հետևյալ համայնքներ՝ գյուղ Կամարիս՝ օգոստոսի 10-ից 13-ը (*երեք օր*) և գյուղ Մրգաշեն՝ օգոստոսի 23-ից 27-ը (*չորս օր*)՝ *2021 թվականի իրավական հսկողություն* իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (*հաշվապահական հաշվառման բաժնին*)՝ գործուղման հետ կապված ծախսերը (*օրապահիկ և ճանապարհածախս*) կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2021 թվականի օգոստոսի 09
ք. Հրազդան



Ա. ՍԱՀԱԿՅԱՆ